

«ՎԱՐԳԱՆԱՆԶ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԽԵՅՆԱԳԵՐՈՒՄԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Խիչնադարյան հայ բառարանագրության մեջ լայն տարածում է գտել Եղիշեի «Վարդանանց պատմության» բառարանը:

Խիչին դարերում, Եղիշեի պատմությունն ավելի լրիվ և լավ հասկանալու համար, կազմել են այդ աշխատության որոշ անհասկանալի բառերի բառարանը: Հայտնի է, որ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության մեջ կան պարսկերենից փոխառյալ բառեր, և ահա այդ նպատակով գտել են ժամանակի մի բանիմաց «պարթև» և նրա օգնությամբ բացատրել անհասկանալի բառերը:

Առաջին բառարան կազմողը նպատակ է դրել տալ ոչ թե Վարդանանց պատմության մեջ հանդիպած բոլոր զժվարիմաց բառերի բացատրությունը, այլ միայն պարսկական համարման բառերի, և բառարանն այդպես էլ կոչվում է. «Երասր Վարդան գրող», «Թարգմանութիւն պարսիկ ց» բառից ի Վարդան գրող» կամ «Լուծումն տարակոյս բանից որ կայ ի պատմութեան Վարդանայ»:

Բառարան կազմողը չի բացատրել Վարդանանց պատմության մեջ հորձածված պարսկերեն այնպիսի բառեր, ինչպիսիք են Ապուրասան—*ամբոստ*, հանգուդն, անսանձ, ակլ. *aparasan*, Լաշկար—*գործ*, բանակ, ակր. *lashkar*, Պատրուհակ—*միսն ուտելի կենդանի*, ակլ. *patrocak* Փուրսը—*դատական քննություն*, հալցարենություն, ակլ. *purcich* և այլն¹:

Պարսկերեն բառերի որոշ մասի անտեսումը բառարանում պետք է վերագրել այն բանին, որ խորհրդատու պարթևը չի իմացել այդ բառերը: Զեռադիր բառարաններում հանդիպում ենք հետևյալ վկայությանը. «Զատաջին ճառն քննեցեալ գտի երիս բառս՝ զոր պարթևն ոչ գիտադ. ասելով չէ պարսից»:

Բառարանը կազմելուց հետո Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության հետագա դարերի ձեռագրերում զրիչներն այդ բառերի չիմաց լուսանցքադրումներ են կատարել՝ տալով բառարանի բացատրությունները: Վարդանանց պատմության ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ լուսանցքադրությունը սկսվում է X¹⁹²⁰ (1657) ձեռագրից, որը պատկանում է XVI դարին (1569—1570):

Մեր աշխատանքի հիմք ընդունել ենք Մատենադարանի մեզ հայտնի ումենակին՝ 1304 թ. գրված № 4149 ձեռագիրը:

Ն. Ակինյանը Եղիշեի մասին գրած իր ընդարձակ ուսումնասիրության մեջ նշում է, «Արդեն ինն ժամանակներ պատճառած են զժվարություններ Եղիշեի պատմության մեջ երեցող պարսկ. բնն բառերը: Ոմն անձանոթ 1350-են առաջ՝ հարցուփորձած է այս մասին «պարթև» մը, և խնդրած անոնց լուծումը: Բաղմաթիվ ձեռագիրներ (հատկապես բառադրեր) հասցուցած են մեզի այս լուծումներները, որոնք խորագիր կը կրեն. «Թարգմանութիւն պարսիկ բառի(ց) ի Վարդան գրող», նաև «Լուծումն տարակոյս բանից որ կայ ի պատմութիւն Վարդանայ»: Ակ. «Զրադաշտական—գրուել բան, կամ զկարեոր ուխտ: Վերուկ, մեծ... Վ. Սեպուհ. կարեոր, կամ մեծարդոյ»²:

Ինչպես տեսնում ենք, Ակինյանին ծանոթ չի եղել մեր նշած աղբյուրը, որի բառահոգվածները ոչ թե եզրափորվում են զրադաշտական—սեպուհ (32 զլխաբառ), այլ՝ զրադաշտական—նախճիր (37 զլխաբառ) բառահոգվածներով:

Ն. Ակինյանի օգտագործած ամենահին ձեռագիրը հավանորեն եղել է № 2371 (1357 թ.) կամ նրա մի այլ տարբերակը, որն իրոք ընդգրկում է հեղինակի նշած սահմանները:

Զրադաշտական—Սեպուհ եզրաբառեր ունեցող Եղիշեի միջնադարյան ձեռագիր բառարաններից պահպանում են Բաշկեն, Բաշաբաթ, Ընուրաղին, Ուսու յազն և ի վաւիթեւ եկայլ՝ բառահոգվածները:

Մենք այն հաստատ համոզմանն ենք, որ Եղիշեի միջնադարյան բառարանը կազմել են շատ ավելի վաղ շրջանում՝ XI—XII դարերում, հիմք ունենալով այն, որ պատմության մեզ

1 ու. Հովհաննիսյանը 1892 թ. Մոսկվայում հրատարակել է Եղիշեի աշխատությունը և կցել շուրջ 4000 բառահոգված պարունակող հայ-ռուսերեն բառարան (էջ 243—391), իսկ 1893 թ. առանձին բրոշյուրով հրատարակել «Յանկուած Եղիշէի պատմութիւն Վարդանանց բառ Անձեա. ցեալ օրինակի հայ-ռուսերեն բառգրքին» (542 բառահոգված): Հավելվածի մեջ տրված են հիմնական բառարանից դուրս մնացած բառերը և որոշ լրացումներ ու ուղղումներ:

2 Ն. Ակինյան, Եղիշե վարդապետ և յուր պատմությունն հայոց պատերազմի, մասն I, Վիեննա, 1932, էջ 116:

Հասած առաջին ձեռագրերում՝ N° 1880 (1687) 1174 թ., N° 1888 (1685) 1207 թ. չկան բաշարաթի, նուրազին բառերը: Բառարանի ավելի հին լինելը հաստատում է նաև Վոմնոգ բառի բացատրության մեջ եղած «Այլ զիրք աւճառ յուսկեաց ասեն» արտահայտությունը, որը լիարժեք վկայում է, որ 1304 թ. գրված բառարանին նախորդող ժամանակներում եղել են այլ գրքեր, կասեինք՝ բառարաններ, որից ոգտվել է N° 4149 ձեռագրի բառարանագիրը:

Հայտնենք, որ բառարանի առաջին օրինակների բառապաշարները տրված են ոչ թե զլիարառերի աչքընկածան պատասխանությամբ, այլ բոլոր նշանների պատմության գլուխներին:

Նախքան «Բառք Վարդան գրոց»-ի բառապաշարների ընդունումը, ընթերցողին ենթակալացնում N° 4149 ձեռագիրը ամբողջությամբ:

Զրազեշտական. այս է գրուի բանն կամ վերաբերում ուր տեսն:

Վրդուկ. մեծ:

Երան և տաներան. մեծարդոյ և պատուական: Ինչ ի մարդեղանց. հաւատո հաւատ:

Ի գիւտայ խարամանո խարեալ. ի գիւտաց պատրոզաց խարեալ:

Զրուան բարսիկը. իսկ Հայք Կոստոս և յոյնը գիւտ:

Ամ պարտրաշն. շահակրան կամ յուսամիտ:

Ի ուղարկիթ. մեղաց քաւարան կամ քաւից զենումն:

Պաշտիկն և պարսագէնն. թէ գերկուց մեծ աղաց զգիտութիւն ունէր:

Ճաշտ առնէր. ներգործէր կամ ստեղծագործէր:

Քրեմորմզդ. անդրանիկ կամ հարապատ:

Նածրացիք. նազարացիք կամ քրիստոնեայք:

Սպահիկ. չեծելիկ կամ դարացի:

Սաղաւարդը. ստրատելատ կամ դարաղլուխը:

Պաշարատ. աւետիս:

Լակիչ. համագունդ կամ միաժողով:

Գեշտակտը. զլիաւորը:

Փանգուրակաորդի. հիւսանորդի:

Քրտիկար շառնելով ոյժ տայք խարամանոյն. այս է յուսցումն շառնելով փորոյ. մուտ տայք գիւտց և հոտոց գար:ութեանց:

Եկաթակ. վտարանդի կամ տարաշխարհիկ կամ անդրնդասույց:

Քաշկայա. ձեռնալաւաշ կամ լաւ:

Փանթամն. զոր կանայք կողպատ ասեն կամ մանդիկ կամ զլիսոյ ծածկոյթ:

Եոմեղ. անասնոյ զոյ կամ աշնան խոտ, զոր զիրք աւճառ յուսկեաց ասեն:

Զանչիկ. սպասաւոր:

Կեշտ. գրաւեր:

Մովպետան մովպետի. իշխանաց իշխան:

Խատ յաղէ. մեծ ճաշ էՅ:

Ի դարիթեր եկայք. ի դարպաս եկայք:

Խուրունայն. բաւակ:

Նուրատին. յոյս հաւատո:

Վատախտարակ. որք ի մի կացեալք ընդ կրուկն դարձուցանել և շփոթէ:

Համակղէն. ամենահաւատ կամ բոլորից ուսուցիչ:

Գերանդերձապետ. ֆառաշ կամ կում աշխատան, զոր վիրք մուլահաւ կոչեն:

Փիշտիպան. մարմնապաշտ կանայք մողուցն:

Պեղուհ. մեծարդոյ կամ հարկեր:

Մարդպան. հասն կամ հարկն:

Նախնիր. ունիր կամ ճապարկալ արխն:

Քննենք «Երբք Վարդան գրոց»-ի բառապաշարները:

1. Զրազեշտական—այս է գրուի բանն կամ վերաբերում ուր տեսն: Հետագա ձեռագրերի մեծ մասը պահել է օրացառական ձևը: Գլխաբառի բացատրությունն առաջացել է բովանդակությունից: Եղիշեն գրում է. «Աստուածքն որ ետուն ընդ գտլութիւն և զլաղթութիւն ի վերայ թշնամեաց րոց, ոչ ինչ են կարու խնդրել ի ընդ յերեկի պատուականացս այլ զի բարձցես զամենայն ուսմունս մոլորութեան մարդկան, և ի մի դարձուցես օրէնս զրազաշտական պատմիրանին»³: Բուն բան կամ կտրեւոր ուխտ բացատրությունը վերաբերում է զրազաշտական պատմիրանին, որ և բառարանագիրը բացատրել է, թե զրազաշտական պատմիրանը՝ կրօնը հիմնական ուսմունքն է և կարեւոր ուխտը:

2. Վրդուկ—մեծ: Բառը պահպանական ՎՐԶԱՐԵԶ, ՎՐԶԱՐԵԿ—ձեից է (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 652): Այս բառը եղիշեի մոտ գործ է ածված մի բանի անդամ, որպես Սիհրներ-եհնի կոչում՝ մեծ խմաստով, ինչպես «Միհրներսեհ վոյրիկ հրամատար» (Եղիշէ, էջ 24): Բա-

3 Ձեռագրում՝ Խոյաղէ:

4 Ձեռագրում՝ Խուրուրունայն:

5 Ձեռագրում՝ չեղինակի կողմից ուղղված է՝ տալահա:

6 Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի յոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 18—19:

ոտարանի տված բացատրությունը միանգամայն ճիշտ է, քանի որ հենց հեղինակն էլ աշխատության մի այլ տեղում վզուրկ բառի փոխարեն գործ է ածել մեծ բառը: «Յովսէփ եպիսկոպոս, հանգերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս, Միհրներսեհի մեծի հաղարապետի... բաղմասցի ողջոյն» (նդիշէ, էջ 28): Վարդանանց պատմության բառարաններն մեծ մասը, իրավացի կերպով, պահել է վզուրկ գրությունը:

3. Սրան և տաճերան — մեծարդոյ և պատուական: Երան և տաներան (ճիշտը՝ աներան) նշանակում է արիներ և ոչ-արիներ, իրանացիներ և օտարազգիներ: «Արիք, արեաց, այսպես կոչինք զինքեանս պարսիկք և մարք, իսկ զօտարազգիս՝ Անարիս»⁷: Բառարանի մեծագույն և պատուական բացատրությունը բխել է պատմության բովանդակությունից: Եղիշեի պատմության երկրորդ գլխում կարդում ենք⁸. «Միհրներսեհ վզուրկ հրամատար, Երան և Աներան, հայոց մեծաց ողջոյն շատ» (նդիշէ, էջ 24):

Բառարաններում եղած տաճերան գրությունը առաջացել է պատմության ձեռագրերից, որտեղ մեծ մասամբ տրված է այդ ձևը:

3. Եւն ի մազղեղանց — հաստի հաստ: Դազղեղական կամ զրազաշտական կրոնն է, որը իրանական պաշտոնական հավատն էր: Միհրներսեհի նամակի մեջ գրված է. «Դուք զիտասիք, ամենայն մարդ որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս զենի մազղեղն, նա խուլ է և կոյր, և ի զիւաց Հարամանոյ խարեալ» (նդիշէ, էջ 24): Այս ղենի մազղեղն զուրկ բառերը բառարանագիրը դարձրել է մեկ գլխաբառ: Եւն բառը Եղիշեի մոտ մի շարք անգամ գործածված է և նշանակում է հավատ, իսկ մազղեղի կրոնը համարվել է հավատների հավատը, այլ կերպ ասած՝ ամենահարգի կրոնը:

5. Ի զիւաց խաւամանո խաբեալ — ի զիւաց պատրուկաց խաբեալ:

Խնչպես տեսնում ենք, այստեղ բառահոգվածը ո՛չ թե զխաբառով է տված, այլ վերցված է ուղղակի աշխատության երկրորդ գլխի «ի զիւաց խաւամանոյ (այլ ձեռագրերում՝ հարամանոյ) խաբեալ» արտահայտությունը: Այստեղ բառարանային արժեք ունի խաւամանի բառը, որը նշանակում է զե, սատանա: «Խաւամանին ասորական Xarmana — օձ բառն է, որը մեր մեջ ժողովրդական ստուգարանությամբ միացվելով զրազաշտական զենի Ահրիման շար աստծու հետ (պնլ Ahriman, Ahriman), ստացավ սրա էլ նշանակու թյունները» (Հ. Աճառյան, Արմ. բառ. հատ. 3, էջ 408): Ավելի ուշ շրջանի բառարանագիրները, իրավացի կերպով, ուղադրության են առել խաւամանի բառը և բացատրել՝ ի պատրուկաց:

6. Զրուան — պարսիկք, իսկ հայք Կոռնոս և յոյնք զես: «Բառք Վարդան զրոց» բառարանի առաջին օրինակի այս, համեմատության ձևով տված, բացատրականը հետագա շրջանի ոչ մի բառարանագիր չի պահել: Վերջինները մեծ մասամբ Կոռնոս կամ Արամազդ բացատրությունն են բնդունել: Այս հատուկ անունը Եղիշեի պատմության մեջ գործ է ածված Միհրներսեհի նամակում. «Քանզի մինչ չե էին երկինք ու երկիր, Զրուանն մեծն աստուած յաշտ առնէր զհաղարամ և ասէր...» (նդիշէ, էջ 24):

7. Ամ պաւտաւաշ — շահակրօն կամ լուսամիտ: Ամպարտքաշ բառի այս բացատրությունն իշխող է եղել ոչ միայն միջին դարերում, այլև հետագայում: Հ. Տաշյանը և Հյուրշմանը նույնպես այդ բացատրությունն են բնդունել: Պրոֆ. Հ. Աճառյանը բառի ուղիղ ձևը համարում է զաշտքաշ, որ նշանակում է առաջին կամ նախնական կրոն: Վարդանանց պատմության N. 1458 (1660) ձեռագիրը (1705 թ.) և Կոստանդնուպոլսի 1823 թ. հրատարակությունը ունեն զամեւաշ պաւտաւաշ (զամպաւտաւաշ) գրությունը:

8. Բոսպլաիտ — մեղաց քաւարան կամ քօշից զենումն: Բողայաիտը պարսկական կրոնին վերաբերող մի գրքի անուն է: Բառը կազմված է պրս. baza — մեղք և զնդ. pahlile — քափություն բառերից (Հ. Աճառյան, Արմ. բառ. հատ. 1, էջ 1127):

9. Պալնաիկև և պաւսաղէկև — թլ գերկուց մեծ ազգաց զգիտութիւն ունէր: Բառարանագիրը տվել է իմաստային բացատրություն, այսինքն ծանոթ էր ահաշլավական և պարսկական կրոնական գրքերին, երկու մեծ ազգերի գիտությունը ուներ:

10. Յաշտ առնէր — ներգործէր կամ ստեղծագործէր: Պահլավերեն yast — աղոթք, երկրպագություն: Բառարանի ներգործէր կամ ստեղծագործէր բացատրությունը տրված է բովանդակությունից ելնելով: Պատմության «Զրուան մեծն աստուած յաշտ առնէր զհաղարամ» արտահայտությունը հասկացել են այսպես. Զրուանը ներգործում էր կամ ստեղծագործում էր հաղար

⁷ Նոր Հայկազյան բառարան, հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 358:

⁸ Մենք որպես օրինակ վերցրել ենք այն հատվածները, որտեղից բառաքաղ է կատարված:

տարի, մինչդեռ՝ զոհ էր անում, որ իրեն մի որդի լինի՝ Վարդանանց պատմության N 537 ձեռագրի զրիչը չի բավարարվել եղածով և ավելացրել է՝ նուէրը կամ պատարագ։

11. Քոնստանդլ—անդրանիկ կամ հարադատ Հայերենում այսպիսի բառ չկա։ Սա ուղղակի վերցված է Եղիշեի պատմության երկրորդ գլխի այն հատվածից, թե թերահավատությունից հպարտ որդին պատռեց Ջրվանի որովայնը և դուրս եկավ. «Ասէ ցնա Ջրուան. «Ո՛վ ես դու՛ Ասէ «Որդին քո եմ Որմիզդ» (Եղիշէ, էջ 24)։ Կոնստանդլը—ընդունել են որպես մեկ գլխաբառ և բացատրել՝ անդրանիկ կամ հարադատ, այսինքն՝ քո առաջին հարադատ որդին եմ։

Ձեռագրային լուսանցրագրություններում երբեմն տրված է այս գույց մեկնությունը և երբեմն՝ մեկն ու մեկը։ Պատմության N 1404 (1381) ձեռագրի զրիչը՝ Ջարարիա սարկավադ Քանարեոցին որոշ նորբերանդում է մոտցրել այլ բառի իմաստների մեջ, մի դեպքում բացատրելով «անդրանիկ», մի այլ տեղում՝ «հարադատ»։

12. Նաժուցիք—նազարցիր կամ քրիստոնեայր։ Միհրներսեսի նամակում նշված «Մի հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նաժրացիսդ անուանէր» հատվածի «նաժրացիսդ» բառը նշանակում է Հիսուս նազովրեցուն հետևողներ, այսինքն՝ քրիստոնյաներ։

13. Սպանիդ—հեծելիդ կամ զորացու։ Ջորք, հեծյալ—զորագունդ բացատրությունը ճիշտ է։ Պեղ. Սպահ. պրոս. սիպահ նշանակում է՝ զորք, բանակ (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 383, 398)։

14. Սաղաւաղդ—ստրատելատ կամ զորագլուխը։ Բառի ստրատելատ բացատրությունը հունական փոխառություն է, որը նույնպես նշանակում է զորագլուխ։ Ե. Տեր-Մինասյանը Եղիշեի համահավաք բնագրում իրավացի կերպով ընդունել է սաղաւք՝ ձեռք, իսկ աշխարհարար թարգմանել է հրամանատար։ Ձեռագիր բառարանների մեծ մասում, ինչպես և Եղիշեի պատմության առաջին տպագրության մեջ (1764 թ.) այս բառն «ուղղված է» և գրված սաղավարտ, որ նշանակում է՝ զինվորականի երկաթե կամ պղնձե զլխարկ, և ոչ մի կապ չունի սաղարի հետ, որ պահպանված Տաճր—զորապետ բառն է։

15. Պաւառատ—աւետիս։ Տասներկու ձեռագիր բառարաններում է պահպանված այս բառը, որը պարսկերեն basarat բառն է և նշանակում է՝ ավետիս, ուրախ լուր։ Եղիշեի պատմության մեջ չկա պաշարաթ>բաշարաթ բառը։ Այն հայ դրականության մեջ ոչ մի տեղ չի վկայված։ Հարց է առաջանում, որտեղից է այն մուտք գործել «Բառք Վարդան զրոց»-ի մեջ։ Վերևում նշեցինք, որ բառարանը կազմված է ըստ պատմության գլուխների։ Մինչ այժմ դիտված բառադրվածները վերցված են աշխատության 2—4 գլուխներից, իսկ բաշարաթ բառից հետո գրված, բառադրվածների մեծ մասը՝ աշխատության 6—7 գլուխներից։ Այստեղից այն հետևությանն ենք հանդում, որ «Բառք Վարդան զրոց»-ի սկզբնական օրինակի գլխաբառերը, թերևս, բաղված են պատմության մեջ առաջին անհայտ այսպիսի օրինակից, որի մեջ եղել է 5-րդ գլուխը կամ որոշ հատված, որից և հանվել են բաշարաթ և նուրեղին բառերը և իրենց ճիշտ բացատրությամբ մուծվել բառարանի մեջ։

16. Ղակիշ—համագունդ կամ միաժողով։ Ղակիշ նշանակում է բանակ, ճակատ, բանակի պատնեշ (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 113)։

17. Եփապետ—գլխաւորք։ Բառը վերցված է «Միոյ աշխարհի երկու զհապետք ոչ լինին» (Եղիշէ, էջ 33) հատվածից։ Բառարանագիրը ճիշտ է հասկացել, այսինքն՝ իշխան, կուսակալ, զլխավոր։

18. Փանդուրակաւորդի—հիստանորդի։ Այս գլխաբառը նույնպես գույց բառերի միացություն է, վերցված է Միհրներսեսին ուղարկած պատասխան-նամակից, որտեղ ասված է. «Թողեալ զԵփսոս Քրիստոս զփրկական անունն՝ Փանդուրակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիշ կարծես» (Եղիշէ, էջ 38)։ Միհրներսեսն ակնարկել էր, որ Հիսուս Քրիստոսն ապօրինի ծնունդ է, նրա հայրը եղել է ոմն Բանթուրակ։ Փանդուրակ բառը Եղիշեի պատմության մեջ գործածված է երկու անգամ։ Ե. Տեր-Մինասյանը համահավաք բնագիրը կազմելիս առաջին դեպքում տվել է Բանթուրակ ձևը (էջ 26), երկրորդ դեպքում՝ Փանդուրակ (էջ 38), նկատի առնելով ձեռագրերը, իսկ աշխարհարար թարգմանության առաջին հրատարակության մեջ՝ երկու դեպքում էլ Բանթուրակ գրությունը (էջ 117, 126)։ Այս բառի մասին պրոֆ. Հ. Աճառյանը գրում է. «Փանդուրակ, գրված է նաև փակդուրակ, բանթուրակ. Հիսուսի հայր համարված մի անձի անունն է և սխալմամբ կարծված է, թե նշանակում է հյուսն, իսկ բացատրական բաժնում Joseph Pandora անձի անունն է, որ հին հրեական մի առասպելի մեջ Քրիստոսի հայրն էր համարվում» (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 1149—1150)։

Փանդուրակ—հյուսն բացատրությունը ժողովրդական փոխաբերական ստուգաբանությունն է։

19. Քրտիկար չառնելով ոյժ տայլ խառամանոյն—այս է լուացումն չառնելով փորոյ, մուտ տայլ զիւաց ի հոտոց դարշոթեան: Եղիշէի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության 2-րդ գլխի մի ամբողջ բառակապակցություն ընդունված է որպես զխաբառ և բացատրված: Այստեղ մեզ հետաքրքրողը քրտիկար բառն է, որը դործ է ածել միայն Եղիշէն, այն էլ երկու անգամ: Հ. Աճառյանն այս բառը որպես զխաբառ տալիս է քրտիկար ձևով և գրում. «Բառն առաջացել է պն. kirpikar ձևից և նախապես պետք է ունենար քրպիկար ձևը»:

Բաղմավեպի մի հոգվածում հեղինակը երկար կանգ է առնում այս բառի վրա և եզրակացնում. «Թեպետ տպագիր քրտիկար գնեն, որ Մխիթարյան հարց (ՌՄՀԸ—1828 տպագիր) օրինակին հետը գրված դանդաղ ընթերցվածքն ալ կարծել տան մեզ, թե համայն ներկա գրչադիրք գնույն ունին, այսուհանդերձ տարակույս չկա որ ձևագրի սխալ մի հասարակ ամենայն օրինակաց, որպես «Նրան և Տաներան», զոր պարտ է ուղղել Երան և Աներան: Քրպիկար՝ ինչպես Մաղղեղն կրոնից հատուկ ուրիշ բառեր, մահմեդականությունն հետք պարսկերենն ի բաց թողված և մոռցված էր (այժմ կողոժածվի արարերեն սաղսը) հավանական է, որ օրինակողը շահականալով թե ինչ է քրպիկար, սմա ամենեն ավելի նմանող արդի պարսկերեն քրգի-դար kirgudar բառը գրին» (Բաղմավեպ, 1895, էջ 6):

Պրոֆ. Ն. Տեր-Մինասյանը Եղիշէի համահավաք բնագիրը կազմելիս երկու ղեպքում էլ ընդունել է քրպիկար ձևը, ծանոթագրելով, թե՝ հիմք ունենալով Հր. Աճառյանի և Միքայել Փորթուգալ փաշայի բացատրությունները, «Ուղղում ենք «քրպիկար», որ նշանակում է վարձատրություն արժանի դործեր» (Եղիշէ, էջ 46):

Քրպիկար դրությունը թե՛ Վարդանանց պատմության և թե՛ բառարանների ոչ մի ձևագրում չի պահպանված. արդ, եթե անհրաժեշտություն էր զգացվում ուղղում կատարելու, ապա համահավաք բնագիրը կազմողն այդպես պետք է վարվեր նաև այլ ղեպքերում, ինչպես, օրինակ, Կուրան և Մակուրան, որ պետք է լինեին Տուրան և Մակուրան, մանավանդ որ պատմության որոշ ձևագրեր պահպանել են դրության այդ ձևը, կամ Փանդուրակը և այլն: Քրտիկար քրպիկար նշանակում է վարձատրության արժանի դործ:

20. Եկօրակ—վտարանդի կամ տարաշխարհիկ կամ անդրնդասոյց: Արմատական բառարանը չկօթակ բառը բացատրում է ախուրված, թեպետ համարելով պահլավական ծագումը: «Բառը Վարդան դրոց»-ի հետագա բառարանագիրները բառահոգվածի բացատրական մասից հանել են անդնդասոյց բառը, ընդունելով որ տարաշխարհիկ լինելը կապ չունի անդունդի մեջ ընկնելու հետ:

21. Քաշկաւս—ձեռնալուաշ կամ լօշ: Քաշկայս > քաշկէն պահլավական kašken բառն է, որ նշանակում է դարհաշ (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 1393):

22. Փանրամն—զոր կանայք կողպատ ասեն կամ մանդիլ կամ զլխոյ ծածկոյթ: «Բառը ուղիղ ձևն է փաղան, պն. Padam, ըստ զրադաշտական գննի՝ աղոթքի ժամանակ քիթն ու բերանը կապելու կողպատ, որով մարդու անմաքուր շունչն արգելվում էր սուրբ կրակին դիպչելուց» (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 1108):

Համահավաք բնագրում, ինչպես և աշխարհարար թարգմանության մեջ, պահպանված է փաղան ձևը, անտես առնելով, որ հին ձևագրերն ունեն փաղամ, փաղան դրությունը:

23. Գոմեղ—անասնոյ զոդ կամ օշնան խոտ, զոր զիրք օճառ լուալեաց ասեն: Գոմեղ բառը դործ է ածել միայն Եղիշէն, այն էլ մեկ անգամ: «Հայսք առանց փանդամի մի զանգցին, ծիւք քակորք ի կրակ մի եկեսցեն, ձեռք առանց դումիդոյ մի լուասցին, շնչրիք և աղուէսք և նապաստակը մի մեռցին» (Եղիշէ, էջ 52): Հետագա ժամանակների բառարանագիրները, բացի № 573 ձևագրից, դուրս են նետել բառարանի ճիշտ աճառնոյ զոդ բացատրական և պահել միայն օնառն ու օշնան խոտը: Բառարանային օճառախոտ, օճառ բացատրությունն առաջացել է բովանդակությունից՝ ձեռքերն առանց դումիդի (հասկացել են՝ օճառի) չլվանան: Բայց իրականությունն այլ է. գոմեղ-ը ոչ օճառ է, և ոչ էլ օճառախոտ, այլ կովի մեղն է, իսկ «Զրադաշտական կրոնի մեջ կովի մեղը սուրբ կամ աղտահանիչ էր, և հավատացյալները նրանով էին լվանում իրենց ձեռքերը» (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 2, էջ 254): Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության № 1458 (1660.1618) ձևագիրը (1705 թ.) ունի կուսիզոյ, իսկ առաջին հրատարակությունը՝ կուլմիզոյ դրությունը:

24. Զանդիկ—սպասաւոր: Աշխատության մեջ բառը դործ է ածված մանրեցի իմաստով: «Մոզն և զանդիկն (մանրեցիք) և հրեայն և քրիստոնեայն և որ բազում կեշտք են ի կողմանս կողմանս աշխարհին պարսից» (Բաղմավեպ, 1896, էջ 51):

25. Կեշտ—կրօնք: Բառը պահլավական keš ձևից է առաջացել և այդպես էլ թարգմանվում է՝ կրոն, աղանդ, դավանություն:

26. Մովսեստան մովսեսի—իշխանաց իշխան։ Մովսեստան մովսեսը նույնն է, ինչ որ մողպետների մողպետը՝ զրադաշտական կրոնի գլխավոր հոգևորականը։

27. Ռաւո յագէ—մեծ ճաշ է։ Այս և հաջորդ բառահոգվածը պահել է նաև «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության № 573 ձևադրին կցված բառարանը։ Բառարանի տված բացատրությունը բառիմաստային տեսանկյունով հիմնականում ճիշտ է։ «Ռաւո պիլ» ընդ մեծ գլխավոր մողերին տված տիտղոս է։ Յագէլ—գոհ անել» (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 4, էջ 220, հատ. 5, էջ 1268)։ Պատմության մեջ եղած հատվածի ուստի բառարանագիրը վերագրել է գոհ կամ, ինչպես ինքն է բացատրել՝ ճաշ բառին, մինչդեռ ռաւո—սև տիտղոսը վերաբերում է մովսեստան մովսեսին։

28. Ի դարիբեր եկայլ—ի դարպաս եկայր։ Բառարանագիրը զարիթեր բառը բացատրել է դարպաս բառով՝ պալատ, ապարանք իմաստով, մինչդեռ պատմության բովանդակությանն ավելի հարմար է պրոֆ. Աճառյանի բացատրությունը. «Բառը պետք է սրբագրել Դարիմիհր կամ Երնկած՝ Դարիմիր, որ է պիլ»։ dar-i-Mihir «դուռն Միհրի», որ գործ են ածում մեծ գոհարությունների սրբավայրի կրակի մեծ տաճարների համար» (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 2, էջ 454—456)։ Նշենք, որ Ե. Տեր-Մինասյանը Նդիշեի համահավաք բնագրում տվել է դարի քիւ (էջ 181), որպիսի գրություն չունի ոչ մի ձեռագիր, իսկ աշխարհարար թարգմանության մեջ՝ դարիթիր (էջ 161) ձևը։

29. Ռուբունյան—պսակ։ Պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը Վարդանանց պատմության աշխարհաբար թարգմանության մեջ հիմք ընդունելով Ամիրի և Բրոքելմանի բառարանները՝ ծանոթագրում է. «Ռաբունա (ռահրունա) ասորերեն բառ է, որ անցել է հունարենին աքραձωն ձևով և նշանակում է գրավական, առհավատչյա» (էջ 307)։ Եվ իսկապես, այս բառի դիմաց «Բառք Վարդան գրոց»-ի ձևագրերը նշում են. «Ասաց թե չէ պարսիկ, բայց յայտ է ի նախատես բանից մողպետին՝ զի պսակն է» և կամ բացատրում՝ «պսակ», «բայց չէ պարսից»։ Պատմության «...և տես և ի ձեռին նոցա դանշուշտ ոբունայն՝ որ հանդերձեալ պահի ի ձեռն ճարտարապետին» դարձվածքը իր ժամանակին բացատրել են՝ տեսավ նրանց ձեռքին նաև անսուտ պսակը, որ պատրաստված պահվում է ճարտարապետի ձեռքում։ Ռաբունի—պսակ բացատրությունն այնքան տարածված և հիմնավոր է եղել, որ մի շարք ձևագրեր, ինչպես և Կոստանդնուպոլսի 1823 թ. հրատարակությունը ոբունայր պսակ բացատրությունը համարել են պատմության հիմնարառ և գրել՝ ոարունյան պսակն։

30. Նուրատին—յույս հաւատու։ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության մեջ նուրատին բառը չի գործածված։ Բառը կաղմված է արաբերեն Ուր —յույս և պարսկերեն դեն—հավատ բառերից և ըստ այսմ բացատրությունը ճիշտ է։

31. Վատախտաւակ—որք ի մի կացեալք ընդ կրուկն դարձուցանէ և շփոթէ։ Բառը պահլավական ծագում ունի և նշանակում է՝ թշվառ, վատարախտ, դժբախտ (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 571)։ «Դիրք Վարդան գրոց»-ի առաջին բառարանագիրը բառի բացատրությունը տալիս նկատի է ունեցել աշխատության ամբողջ հատվածը, ուր ասված է. «Եւ այնպէս նկղեսուշտապէր, զի անձուկ լաշկարաւ, վատախտաւակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր» (Սդիշէ, էջ 142)։ Բառարանագիրը բացատրել է՝ ու Դիւրիւն շփոթեցրել և ընդ կրուկ (այսինքն՝ հետ) են դարձրել։

Վատախտաւակ բառի այս բացատրությունը մեծ մասամբ անորոշ է եղել հետագա բառարանագիրների համար, նույնիսկ մի քանիսը շահականալով բառահոգվածը, բացատրության ըսդ կրուկ-ը առանձին գլխաբառ են ընդունել և բացատրել՝ դարձուցանէ և շփոթէ բառերով։ Այս սխալ բառահոգվածն առաջին անգամ հանդիպում է № 2335 ձևագրում, որը դրվել է 1476 թ.։

32. Համակղէն—ամենահաւատ կամ բոլորից ուսուցիչ։ Համակղեն բառը Նդիշեի մոտ գործածված է երկու անգամ։ Պահլավերենում hamakden նշանակում է ամբողջ կրոնը իմացող, զրադաշտական աստվածաբան, այսինքն՝ կրոնի ամբողջ վարդապետությունը լավ ուսած։

33. Իւրանդերձապետ—ֆառաշ կամ կումաշապան, զոր վիրք տալահա կոչեն։ Զեռագրերը մեծ մասում, ինչպես և առաջին տպագրություններում, բառը տրված է դաւանդերձապետ ձևով. այսպես է ընդունված նաև Նդիշեի աշխարհարար թարգմանության մեջ, մինչդեռ համահավաք բնագրում պահված է ավելի սակավ հանդիպած դաւանդաւապետ գրությունը, նկատի առնելով, որ բառը կաղմված է դար (պրս. dar — դուռ) և պիլ. andarpat — անդերձապետ բառերից։ Բառի ֆառաշ բացատրությունը ճիշտ չէ, զերանդերձապետը պարսից արքունիքում բարձր պաշտոնյա էր, մինչդեռ ֆառաշն ստորին պաշտոնյա է։

Բառարանի տված կումաչապան kumachapan — մետաքսեղենի պահպան բացատրությունը վկայում է, որ ղերանդերձապետը եղել է պալատական հանդերձապետը, իսկ տալախա, բառարանի 33 ձեռագրերում՝ սալահրայ բացատրությունը, հավանորեն, արար. սիլահ (silah — զենք, սպառազինություն) բառի մի ածանցումն է՝ արքունի զենքերը պահող նշանակությամբ:

34. Փիշտիպան — մարմնապաշտ կահայր մոդուցն. Փշտիպանը պահլավերեն, pustiḥan — թիկնապահ, անձնապահ զինվոր բառն է (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. 6, էջ 1298): Բառարանում տրված բացատրությունը բառարանագիրը սխալ կիրառվ հանել է պատմության բովանդակությունից: Եղիշեն գրում է. «Յանդզեցան և ևս կանայք փշտիպանացն յաւուր կիրակէի անցուցանել զճրագունս եկեղեցւոյն և պատառել զհանդերձս հաւատաւոր կանանցն» (Եղիշէ, էջ 65): Այստեղ կանայք փշտիպանացն նշանակում է փշտիպանների կանայք: Ա՝ 3170 ձեռագրի հեղինակը բացատրության կանայք մոգուցն ընդունել է առանձին բառահոգված և բացատրել՝ սարկավագունիք:

35. Սեպուհ — մեծարգոյ կամ հարկերու Բառը իրանական փոխառություն է (պհլ. Vispuhr) որ նշանակում է՝ ասպետ, ազնվականության մի աստիճան: «Եւ զայլ բաղում զօրս յարքաւի տանէն արկ յինքն, և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ» (Եղիշէ, էջ 74) հատվածը բառաբանագիրը հասկացել է՝ և ուրիշ բազմաթիվ գործ էլ արքունի տնից իր կողմը գցեց. նույնպեւ և ուրիշ տոհմից մի քանի մեծարգոների և հաւկելւորների:

36. Մարգալան — հասն կամ հարկն: Այս բառահոգվածի զխաբարոր զանազան կերպ է հասկացվել բառարանագիրների կողմից՝ մարգպան, մարգան, մարգոն, մարգ, մարգն, իսկ մի շարք բառարաններ ուղղակի դուրս են թողել այդ բառահոգվածը: Բառարանի տված հաս. հաւկ բացատրությունը առաջացել է մարգպանի ունեցած շիրքից, իրավունքներից: Նշենք, որ հաւր նույն հարկն է:

«Գիրք Վարդան գրոց»-ի բացատրությամբ մարգպանը եղել է մարդի պետը, կուսակալություն և տրվել է մարդի հասը, հարկը:

37. Նախնիր — ոճիր կամ ճապաղեալ արին: Այս բառն այժմ բացատրվում է՝ մեծ կոտորած, արյունահեղություն: Բառարանի ոճիր բացատրությունը սխալ չէ: Եղիշեի պատմության «Եւ բաղում զործեալ էր նորա նախնիրս» հատվածի փոխարեն Ա՝ 1888 (1685) և 1886 (1683) ձեռագրերը, ինչպես և Կ. Պոլսի տպագրությունն ունեն «Եւ բաղում ոճիրս զործեալ էր նովաւս նախադասությունը (Եղիշէ, էջ 88):

Ինչպես տեսանք, Վարդանանց պատմության բառարանում ընդգրկված զխաբարների մեծ մասը ճիշտ է բացատրված (վգուրկ, դենիմազդեզ, դհհապետ, շկոթակ, քաշկեն, փանդամ, նախնիր և այլն): Բառերի մի այլ շարքի թյուր բացատրությունն արդյունք է այն բանի, որ բառարանագիրներն այլ կերպ են հասկացել պատմության բովանդակությունը, որը մի քանի գեղարքերում առաջացրել է սխալ բացատրություն (յաշտ առնել, սեպուհ և այլ):

Ձեռագրային համեմատություններից նկատվում է, որ հետագա դարերի գրիչները նույնությամբ արտագրել են «Բառք Վարդան գրոց»-ի առաջին օրինակները և կամ օգտագործելով եղած բառարանները, բացատրությունների մեջ հապավելով կամ ավելացնելով այս ու այն բառը. ճշտել, խմբագրել են բառահոգվածները:

Եզրափակենք. այսօր կարևորն այն չէ, թե Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատության մեզ հայտնի առաջին ձեռագիր բառարանի գրիչը կամ հետագա բառարանագիրները որքան ճիշտ են բացատրել այդ բառերը. կարևորն այն է, որ հետաքրքրվել են և ցանկացել ճիշտ կերպով հասկանալ հայոց պատմության այդ արյունոտ, բայց հերոսական է. և նկարագրությունը:

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁԸ

Մատենադարանի աղբյուրներից հայագիտության մեջ վաղուց արդեն որոշված է հին հայկական ամիսների հերթական ցուցակը. Նավասարդ, Հոռի, Մահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկի, Մահմի, Ահեկի, Մարերի, Մարգաց, Հրուտից և Աեւելաց: Վերջին ամիսը 5 օր էր: Հայկական տոմարի առաջին ամիսը Նավասարդն էր:

Եստ չին ժողովուրդներ, զարգացման այն աստիճանում, երբ օգտագործում էին բունային տոմարը, նոր տարվա սկիզբը համարում էին զարնանային օրահաշվարարի օրը: Այդ տե-